ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԵՐԿՆԻ ԵՒ ՄԵՆՔԵԼՈՅ.

Քրիստոսասէր եղբարք, մեր Փրկչի սուրբ յարութիւնը արժանաւորապէս տօնելու համար թող այս աւետարեր հրեշտակի կենսատու ձայնը յարուցանէ և մեզ մեր բարոյական մեռելութիւնից, յարուցանելով մեր սրտերի մէջ կենդանի հաւատ և յոյս դէպի մեր վերջին աւուր յարութիւնը։ Թող խորտակուին և թօթափուին այն ամէն մեղքերի կապանքները, որոնցով կապուած, կաշկանդուած են մեր սրտերն ու հոգիքը։ Արդարութիւնն ու ճշմարտութիւնը, որոնցով յաղթեց և ամենապարտ արեց մեր յարուցեալ Փրկիչը խաւարի իշխանին, թող լինին մեր ամէն գործերի առաջնորդն ու ուղեցոյցը։ Յարուցեալ Փրկչի սիրով վառենք մեր հոգիքը և նորա բազմատեսակ պտուղներով — առաքինութիւններով զարդարենք մեր կեանքը, որ մեր վերջին աւուր յարութիւնը ևս լինի փառքով և յաղթանակով։

* * *

Հրապարակական շնորհակալութիւն Մոսկուայի բարեկրօն Յարութիւն քահանայ Պօպովեանցին, որ Մայր Աթոռոյս Ս. Գէորգեան Ճեմարանի մատենադարանին ընծայեց իւր աշխատասիրած «Պատմութիւն նոր կտակարանի» օգտակար գասագրքից 400 և հինգ օրինակ։ Յանկալի էր, որ բարեկրօն Քահանայիս օրինակին հետևէին և ամենայն հեղինակներ։

* * *

Ախլցխայի քահանաներէն բարեկրօն Մարտիրոս քահանայն Մեծատունեանց ցանկանալով ըստ կարեաց մասնակցել Հայ. ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան գործին ուխտեց ներկայ թուականից սկսեալ մինչև իւր մահը նուիրել յօգուտ Մայր Աթոռոյս Ս. Գէորգեան Ճեմարանի ի տարին 400 և հինգ բուբլի, որով և արժանացաւ Ազգիս Վեհափառ Հայրապետի սուրբ օրհնութեանը։ Երանի՜ թէ ամէն մի հայ իւր ձեռքից եկած օգնութիւնը ինքնայորդոր սիրէր մատուցանել այս գիտութեան հայկ. կեղրոնական տաճարին, որից միայն անշուշտ պէտք է ծնանին Ազգիս բարոյական յառաջադիմութեան ուժերը և կրկին պաշտօնեաներ։